ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/945-26 առ «16» 04 2026թ.

Ձեր № 260 առ "14" 04 2026թ.

«Արամայիս Եպիսկոպոսյան» Ա/Ձ
Ա. Եպիսկոպոսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-151/25-01/042 պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Եպիսկոպոյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռելեների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-151/25» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Արամայիս Եպիսկոպոսյան» Ա/Ձ-ի միջև 2026 թվականի հունվարի 21-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-151/25-01/042 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում», սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ի 3 (մասնակի), 5 և 15-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները և Ձեր կողմից ստացված գրությունը՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Արամայիս Եպիսկոպոսյան» Ա/Ձ միջև 2026թ. հունվարի 21-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-151/25-01/042 պայմանագիրը 3 (14 հատի մասով), 5 և 15-րդ չափաբաժինների մասով և առաջարկում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (164 375 ՀՀ դրամ) և որակավորման (246 562,5 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

,

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91